«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Միջառարկայական կապերի կիրառման ազդեցությունը սովորողների մետաճանաչողության վրա

Հետազոտող ուսուցիչ՝ Մ. Հովհաննիսյան

Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Վասիլյան

Արմավիր 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------4

Գրականության ակնարկ---------- 6

Գործնական համատեքստ----------7

Եզրակացություն---------- 12

Օգտագործված գրականության ցանկ---------- 14

Ներածություն

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից դպրոցը գտնվում է վերակառուցման փուլում, մշտապես տեղի են ունենում ուսուցման բովանդակության, ուսումնական գործունեության կազմակերպման բարեփոխումներ, որոնք մի շարք խնդրահարույց իրավիճակների առջև են կանգնեցում թե ուսուցիչներին, և թե աշակերտներին, ինչի արդյունքում տուժում է ուսումնական գործունեությունը:

Կրթական ոլորտը հանդիսանում է ընդհանուր միջնակարգ կրթության բաղկացուցիչ մասը, որը սովորողներին զինում է անհրաժեշտ տեխնիկա-տեխնոլոգիական գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով, առանց որոնց անհնար է երկրի լիարժեք սոցիալ-տնտեսական առաջընթացը, անձի ձևավորումը, ազգային լավագույն ավանդույթների պահպանումը:

Այս պայմաններում շատ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ ժամանակակից կրթական համակարգում առաջնահերթ արժեվորվում են ոչ թե պատրաստի գիտելիքները, որոնք ուսուցիչնեչրը կարող են փոխանցել աշակերտներին, այլ աշակերտների կողմից դրսևորվող ճանաչողական և մետաճանաչողական գործընթացները: Ճանաչողական և մետաճանաչողական գործունեությունն աշակերտի կողմից ենթադրում է նրա ինքնուրույն, ստաղծագործական և հետազոտական աշխատանքը, որն ուղղված է այս կամ այն ոլորտում առկա գիտելիքների հարստացմանը, նոր հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը:

Ճանաչողական գործունեության արդյունքում սովորողը հնարավորություն է ստանում յուրացնել առարկայի բովանդակությունը, տիրապետել դասանյութի յուրացման համար անհրաժեշտ մեթոդներին, հմտություններին ու կարողություններին: Ճանաչողությունը հոգեբանական գործոն է, որն ապահովում է

ուսումնական նպատակների իրագործումը: Սովորողի մետաճանաչողության զարգացման վրա իր դրական ազդեցությունն ունի առարկայական ինտեգրումը:

Միջառարկայական կապերի ստեղծումն առավել հեշտացնում է սովորողի համակողմանի զարգացման գործընթացը, աշխարհայացքի ու արժեհամակարգի ձևավորումը: Մեկ դասի ընթացքում սովորողը հնարավորություն է ստանում ձեռք բերել այլ ոլորտներից համակողմանի գիտելիքներ, զարգացնել իմացական կարողություններ, գեղագիտական ճաշակը: Այլ խոսքով՝ միջառարկայակ կապերի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում օգնում է սովորողին բազմակողմանի զարգանալ՝ ձեռք բերելով ինտեգրված գիտելիքներ ու կարողունակություններ: Այսպիսով, դասի ընթացքում միջառարկայական կապերի նպատակային օգտագործումը սովորողին կտա հնարավորություն մեկ դասի շրջանակներում ստանալ մի շարք կարողունակություններ, գործնական աշխատանքների ժամանակ կիրառել դրանք, ինչի արդյունքում էլ կզարգանա նրա մետաճանաչողությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել միջառարկայական կապերի կիրառության կարևորությունը և արդյունավետությունը՝ առարկայական գիտելիքների հարստացման և ճանաչողական գործընթացների ակտիվացման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են.

- Առանձնացնել միջառարկայական ինտեգրման մեթոդի բնութագրիչները;
- Առանձնացնել միջառարկայական կապերի կիրառության սկզբունքները;
- Ուսումնասիրել միջառարկայական կապերի կիրառության առանձնահատկությունները՝ աշակերտների մետաճանաչողական գործընթացների ակտիվացման տեսանկյունից:

Գրականության ակնարկ

Միջառարկայական կապերի առկայությունը ուսումնական գործընթացում թույլ է տալիս աշակերտների մոտ պատկերացումներ ձևավորել ուսումնասիրվող առարկայի և դրան վերաբերող ունիվերսալ օրենքների մասին:

Միջառարկայական կապերը կարելի է սահմանել, որպես մանկավարժական կատեգորիա, որը կիրառվում է նշանակելու համար համադրված և ինտեգրված պատկերացումներ օբյեկտների և երևույթների մասին, որոնք իրենց արտացոլումն են գտել ուսուցանման բովանդակության, ձևերի և մեթոդների մեջ:[1]

Միջառարկայական կապերի կիրառությունը ուսումնական գործընթացում թույլ է տալիս ուսուցչին իրացնել մի քանի կարևոր ուսումնական նպատակներ, որոնց թվում կարելի է առանձնացնել հետևյալները.

- Դրանք հնարավորություն են տալիս ուսուցչին աշակերտների մոտ ամբողջական պատկերացումներ ձևավորել բնության, իրենց շրջապատող առարկաների և երևույթների մասին, դրանց ամբողջականության և փոխադարձ կապվածության մասին;
- Դրանք թույլ են տալիս ուսուցչին աշակրտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, ինչպիսիք են նրանց գիտելիքների խորությունը, գիտակցվածությունը, ճկունությունը և գործնական մեծ նշանակությունը;
- Դրանց կիրառությունը ուսուցանման ընթացքում թույլ է տալիս աշակերտներին ստեղծագործական մոտեցում, տրամաբանական միտք ձևավորել՝ ուսումնասիրվող նյութի շրջանակներում և առօրյա կյանքում:
- Դրանք ընդլայնում են աշակերտների աշխարհայացքը, ինքնուրույնության աստիճանը;

[1] Ռաֆայելյան Ն., Միլիտոսյան Լ., Նախագծի մեթոդը՝ որպես միջառարկայան ինտեգրման միջոց, Երևան 2005, էջ 12

- Դրանց օգնությամբ ուսուցիչը կատարելագործում է ուսումնական նյութի բովանդակությունը, դրա մատուցման ձևերի և մեթոդների կազմակերպումը:[2]

Միջառարկայական կապերի կիրառությունը ուսուցանման ընթացքում, իր հերթին, հիմք է ապահովում աշակերտների գիտելիքների ինտեգրման, դրանց գործնական նշանակության ընկալման համար:

Սովորողներին աշխարհի մասին բազմակողմանի տեղեկություններ տալը, այլ գիտելիքների հետ կապի մեջ դնելը կարևոր նշանակություն ունի վերջիններիս աշխարհաճանաչողության համար: Միջառարկայական կապը սովորողի համար կարելի է համարել նաև դաստիարակությանը խթանող միջոց:[3]

Միջառարկայական կապերը կորող են նաև օգնել ուսուցչին՝ ուսումնական առարկան հետաքրքիր ու գրավիչ դարձնելու սովորողների համար: Դպրոցի ու դասապրոցեսի նկատմամբ հետաքրքրասիրության պակասի, անտարբերության իրավիճակի հանգելու կարևորագույն պատճառներից մեկն էլ այն է, որ այսօրվա մեր կրթական համակարգում, ըստ էության, քիչ են հաշվի առնվում սովորողի տարիքային հոգեբանական առանձնահատկությունները:

Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացնում են մեթոդոլոգիական, կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթներ:[4]

Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը: Դրանք խթանում են սովորողների՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու, եզրահանգելու կարողությունների ձևավորմանը:

Գործնական համատեքստ

---

[2] Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Եր., «Ան-Ջոն», 2012, էջ 48

[3] Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов. – М.: 2008, էջ 36

[4] Туник Е. Е. Диагностика креативности. Тест П. Торренса: Методическое руководство. СПб., 2008, էջ 96

Այսպիսով, ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել ուսումնական առարկաների դասավանդման կոորդինացում միջառարկայական կապերի սկզբունքների հետ, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը:

Օրինակ, նշենք, որ նախկինում կրթական համակարգին ավելի շատ բնորոշ էր այսպես կոչված «առարկայակենտրոն» սկզբունքով ուսուցումը: Սակայն, այդ սկզբունքի կիրառման պայմաններում յուրաքանչյուր առարկայական գիտության դասավանդմամբ նախատեսված գիտելիքների յուրացումը աշակերտների կողմից միշտ չէ, որ հասել է իր նպատակին: Այդ իսկ պատճառով սովորողի մեջ չի ձևավորվում ամբողջական աշխարհայացք դասավանդվող այդ կամ այն առարկայից: Այսպես կոչված առանձին-առանձին ուսուցանման արդյունքում աշակերտների մոտ մնում են գիտելիքների միայն որոշակի հատվածներ, որոնք նաև դժվար է լինում կապել իրականության հետ, գտնել այդ գիտելիքի յուրացման անհրաժեշտությունը և դրա օգտակարությունը՝ շրջակա աշխարհի հետ փոխազդելու համատեքստում: Մինչդեռ, համակարգված ուսումնառության հիմնական նպատակը կայանում է նրանում, որպեսզի աշակերտները քայլ առ քայլ սովորեն և հասկանան, թե ինչ է տեղի ունենում շրջակա աշխարհում, ինչ գործընթացներ և երևույթներ կարելի է տեսնել պրակտիկ կյանքում և որքանով են դրանք արտացոլվում դպրոում իրենց ստացած գիտելիքների մեջ և դրանց ներքո:

Միջառարկայական կապեր ստեղծելու արդյունավետ եղանակ է ինտեգրված դասերի անցկացումը: Այսպիսի դասերի ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցում: Առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ՝ խորացնելով ուսուցանվող նյութի իմացությունը: Ինտեգրված դասերի ընթացքում հնարավոր է միավորել ինչպես տարբեր առարկաներ, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ: Նման

դասերի ժամանակ կարելի է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որպեսզի սովորողը մտածի և ինքնուրույն հասկանա առաջադրված խնդրի լուծման եղանակները:[5]

Այս գործընթացի ժամանակ վերջինիս մեծապես կարող է օգնել մետաճանաչողությունը: Զարգացած մետաճանաչողություն ունեցող սովորողը ջանք է գործադրում խնդրի տեսակը ճանաչելու, առաջադրանքը վերլուծելու, իրեն արդեն իսկ ծանոթ խնդիրների հետ համեմատելու, նմանությունները և տարբերությունները որոշելու հարցում, իսկ մյուս դեպքում՝ այն արդեն իսկ մետաճանաչողական փորձի առկայություն է ենթադրում, երբ աշակերտը, առանց ջանք գործադրելու, կարողանում է որոշել խնդրի լուծման համար անհրաժեշտ ճանապարհը:

Մետաճանաչողության հետ սերտորեն կապված է ինքնաանդրադարձը: Դասի ժամանակ սովորողը պետք է անընդհատ հնարավորություն ունենա ինքնաանդրադարձ կատարելու: Օրինակ՝ պատկերացնենք մի այսպիսի իրավիճակ, երբ ուսուցիչը միջառարկայական կապ է ստեղծում իր և հարակից առարկաների միջև: Նախօրոք պատրաստած տեսասահիկի օգնությամբ նա ներկայացնում է դասի թեման: Այնուհետև ուսուցիչը խնդրում է աշակերտներին հատուկ թերթիկների վրա գրել այնպիսի մի իրավիճակի, վայրի մասին, որոնք առնչվում են ներկայացված թեմայի հետ, ինչպես նաև մեկնաբանել այդ առնչությունը և հիմնավորել այն: Մետաճանաչողությունն այս պարագայում կօգնի սովորողներին համակարգել իրենց ողջ ներուժը, հիշել, թե նախկինում երբ, կամ ինչ հանգամանքներում են առնչվել այդ վայրերից որևէ մեկին, ինչ կարող է մտաբերել: Սովորողը համակարգում է իր ողջ տեղեկատվությունը տեքստի մեջ:

Հաջորդիվ ուսուցիչը հնարավորություն է ստեղծում, որպեսզի սովորողները ներկայացնեն իրենց աշխատանքները: Այստեղ շատ կարևոր են ուսուցչի հարցադրումները: Ավելի նպատակահարմար է, որ ուսուցիչը հետաքրքրվի, թե ի՞նչ

[5] Иванов, В.Г. Междисциплинарные связи в образовательном процессе / В.Г. Иванов, Т.А. Иванова // Среднее профессиональное образование. – 2000. - № 12, էջ 42-46

հանգամանքներում է սովորողն առչվել այդ վայրի մասին տեղեկություններին, էլ ի՞նչ կարող է ավելացնել:

Աշխատանքի ավարտին ուսուցիչը կգրանցի հետևյալ արդյունքները.

- Աշակերտները վերհիշեցին աշխարհագրություն և պատմություն առարկայից իրենց գիտելքիները, ինչում նրան օգնեց մետաճանաչողությունը,
- Կատարվեց լեզվամտածողական աշխատանք;
- Կատարեց տեքստային աշխատանք;
- Աշակերտները վերհիշեցին նաև նկարագրական տեքստի պահանջները;
- Աշակերտները ամրապնդեցին իրենց բանավոր հաղորդակցական հմտությունները;
- Աշակերտը կատարեց ինքնանդրադարձ, տեսավ իր առավելությունները ու թերությունները:

Կարող ենք ասել, որ միջառարկայական կապերի ստեղծումը դասավանդման ընթացքում մեծապես ազդում է աշակերտների մետաճանաչողության վրա, քանի որ դրանք թույլ են տալիս համակարգված ձևով վերհիշել տարբեր ոլորտներից առկա գիտելիքները, մղում են ինքնուրույն և հետազոտական աշխատանքի՝ այդ գիտելիքները հարստացնելու և խորացնելու ուղղությամբ:

Միջառարկայական կապերի ստեղծումը թույլ է տալիս սովորողների մոտ ձևավորել մի շարք կարողունակություններ ևս, որոնցից են՝ թվային և մեդիա կարողունակություն, մշակութային կարողունակություն, տնտեսական կարողունակություն: Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության

յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Ուսումնական գործընթացում սովորողների մղումները ձևավորվում են նրանց կարիքների և հետաքրքրությունների հիմքով, ուստի ուսուցիչը պետք է բոլոր ջանքերն ուղղի սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Իր կարիքները բավարարելու համար մարդը պետք է ընկալի աշխարհը, ուշադրություն դարձնի գործունեության որոշակի բաղադրիչների վրա, պատկերացնի, թե ինչ է պետք անել, հիշի, մտածի և արտահայտվի: Հետևաբար, առանց ճանաչողական կարողությունների, մարդու գործունեությունը անհնար է:

Ժանակակից աշխարհում կրթությունը մշտական փոփոխության և զարգացման մեջ է: Այս առումով կրթության մասնակիցները, մասնավորապես ուսուցիչները, բարձր պատասխանատվություն են կրում կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի համար: Կրթությունը տեղում չի կանգնում, քանի որ ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը նպաստում է թե' ուսուցչի, թե' սովորողի բարձր շարժունակությանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը արդյունավետ է դարձնում ուսուցումը, քանի որ աշակերտները սովորելու բարձր մոտիվացիա են ձեռք բերում, ինչն անչափ կարևոր հանգամանք է ուսումնառության ընթացքում: Այսպիսով, կարող ենք պնդել, որ միջառարկայական կապերի նպատակային ստեղծումը բավականաչափ արդյունավետ կարող է լինել սովորողների մետաճանաչողության զարգացման համար: Ամեն ինչ կախված է սովորողի և ուսուցչի երկուստեք համագործակցելու և դրական արդյունքներ ունենալու ցանկությունից:

Այսպիսով, միջառարկայական կապերի կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը:

Եզրակացություն

Այսպիսով, մարդկության պատմության ընթացքում մշակվել են կրթության զանազան տեսություններ և մեթոդներ, որոնց հիմնական նպատակը դրա արդյունավետության բարձրացումն ու բազմակողմանի, լիարժեք անձի ձևավորումն է: Դրանցից մեկն է համարվում միջառարկայական ինտեգրման մեթոդը, որն այսօրվա դրությամբ համարվում է առավել արդյունավետ ուսումնական մեթոդներից մեկը: Այն թույլ է տալիս միավորել և համադրել գիտելիքներ տարբեր գիտական ուղղություններից և ուսումնական առարկաներից:

Այս մոտեցումն արդարացված է տարբեր առարկաների ուսոցման ընթացքում: Դպրոցական առարկաների միջառարկայական ուսումնասիրությունը և ուսուցումը դպրոցում հետապնդում է մի շարք նպատակներ, որոնք կապված են գիտելիքների ինտեգրման, ընդհանրացման, համադրման և զուգորդման հետ:

Միջառարկայական ինտեգրման մեթոդի կիրառությունը առարկաների ուսուցման ընթացքում խորհուրդ է տրվում իրականացնել ոչ միայն լոկ ուսումնական նյութի մատուցման միջոցով, այլ կազմակերպելով հետաքրքիր խաղ-վիկտորինաներ, համապատասխան հանձնարարություններ տալ աշակերտներին:

Այս մեթոդի կիրառման համատեքստում ուսուցչի հիմնական և կարևոր նպատակն է աշակերտներին ուղղորդել, սովորեցնել, հետազոտել, ստեղծագործել, որոնել: Հենց այդպես էլ դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար: Այսօրվա մանկավարժությունը հակված է մտածելու, որ նմանատիպ դասերը սովորողի՝ մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ:

Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացնում են կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթներ: ՈՒսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը: Միջառարկայական կապերի

արդյունավետ օգտագործմամբ էլ կստեղծվեն լայն հնարավորություններ՝ սովորողների կողմից շրջակա աշխարհի ամբողջական գիտական պատկերի ստացման յուրացված գիտելիքների կիրառելիության ոլորտների բացահայտման, դրանք փոխանցելու կարողությունների ձևավորման տրամաբանական, ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային ու ստեղծագործական կարողությունների ու հմտությունների ձևավորման համար։

Հանրակրթական դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ, այլև որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև մյուս առարկաներից։ Ինտեգրված դաս իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր։ Փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է։ Եվ միջառարկայական կապի օգտագործումը երբեք և ոչ մի դասարանում ինքնանպատակ չպետք է լինի, այլ միայն միջոց հիմնական նպատակին հասնելու համար։

Օգտագործված գրականության ցանկ

1. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, - Եր.: «Ան-Ջոն», 2012
2. Ռաֆայելյան Ն., Միլիտոսյան Լ., Նախագծի մեթոդը՝ որպես միջառարկայան ինտեգրման միջոց: - Եր.: 2005
3. Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов. – М.: 2008
4. Иванов, В.Г. Междисциплинарные связи в образовательном процессе / В.Г. Иванов, Т.А. Иванова // Среднее профессиональное образование. – 2000. - № 12, էջ 42-46
5. Туник Е. Е. Диагностика креативности. Тест П. Торренса: Методическое руководство. - СПб.: 2008